Արձանագրություն կինեմատոգրաֆիայի ոլորտում իրավակարգավորումների և ընթացակարգային բարեփոխումների արդյունքների վերաբերյալ

Հայաստանի կինոյի հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) և Կինոգործիչների Միության կինեմատոգրաֆիայի ոլորտում իրավակարգավորումների և ընթացակարգային բարեփոխումների համատեղ աշխատանքների կազմակերպման նպատակով մասնագիտական խումբ կազմելու մասին 24.07.25թ.թիվ 115-L հրամանով ստեղծված աշխատանքային խմբի 28.07.25 նիստի

Ք. Երևան 28.07.25թ.

Ներկա էին՝

Դավիթ Բանուչյան՝ Հիմնադրամի տնօրեն

Արմեն Խաչատրյան՝ Հիմնադրամի տնօրենի խորհրդական

Դիոնիս Մարգարյան՝ Հիմնադրամի իրավաբան

Արտակ Պողոսյան՝ Հիմնադրամի ֆինանսատնտեսական բաժնի պետ, գլխավոր հաշվապահ

Անի Սահակյան՝ Հիմնադրամի կինոնախագծերի հայտերի ընդունման ուսումնասիրման և աջակցման բաժնի պետ

Արտյոմ Բաղդասարյան՝ Հայաստանի կինոռեժիսորների և կինոպրոդյուսերների գիլդիայի նախագահ

Արմինե Անդա՝ Հայաստանի Անիմացիայի գիլդիայի նախագահ

Տիգրան Առաքելյան՝ Հայաստանի անիմացիոն ասոցիացիայի նախագահ

Ռաֆֆի Մովսիսյան՝ Կինոգետ, կինոռեժիսոր, պրոդյուսեր

Զառա Ջյան՝ կինոռեժիսոր, պրոդյուսեր

Կարինե Սիմոնյան՝ կինոպրոդյուսեր

Հովհաննես Գալստյան՝ կինոռեժիսոր, պրոդյուսեր

Թամարա Ստեփանյան՝ Հայաստանի վավերագրողների գիլդիայի նախագահ

Օրակարգում.

1. «Կինեմատոգրաֆիայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի քննարկում, ոլորտում իրավակարգավորումներ և ընթացակարգային բարեփոխումների կատարելու հարցը:

2. Ազգային ֆիլմերի նախագծերի պետական ֆինանսավորման տրամադրման մրցույթների կազմակերպման և անցկացման փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին հարցը:

Քննարկվեց.

Դավիթ Բանուչյան՝ Առաջարկում եմ քննարկել Հիմնադրամի և արտադրողների համագործակցությունը, օրենքում կատարվող փոփոխությունների փաթեթի մասով:

Արմեն Խաչատրյան՝ Օրենքի փոփոխությունների նախագիծը մշակվել է Հիմնադրամի կողմից: Օրենքի կիրառման ընթացքում, համեմատելով Օրենքը առկա իրավիճակի և Հիմնադրամի կանոնադրության հետ, մի շարք հակասություններ են ի հայտ եկել, որը խոչընդոտ է հանդիսանում Հիմնադրամի գործունեության համար: Օրենքի մեջ նաև եղել են մի շարք հասկացություններ, որոնք հստակ ձևակերպված չեն եղել և ընդունելի չեն: Սա, հետագայում խնդիրներ է առաջացրել հակասությունները մեկնաբանելիս: Օրենքի վերջին փոփոխություններով որոշ հասկացություններ հանվել են, որոնք այլ-օրենսդրական ակտերով արդեն իսկ կարգավորված են՝ Օրենքի մեկնաբանումը չծանրաբեռնելու նպատակով:

Գաղափարները, որոնք դրվել են Օրենքի փոփոխությունների հիմքում հետևյալն են.

Հիմնադրամը դարձնել ներդրումներ կատարող ու շահույթ ստացող մարմին: Հետևյալի տրամաբանությունը Օրենքում Հիմնադրամին հատկացված Դրամագլխի առկայության մեջ է, որը ներկայիս Օրենքի կարգավորումներով Հիմնադրամը սահմանափակված է որոշ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելուց: Սակայն հիմնադրամների տրամաբանությունը այն է, որ Դրամագլխին տրամադրված գումարը Հիմնադրամը իրավասու լինի ներդրումներ կատարել ոլորտում և հետագայում եկամուտ ստանալ: Համեմատելով միջազգային փորձը այլ հիմնադրամների աշխատանքների հետ՝ վերջիններս իրավունք ունեն բացի պետական ֆինանսավորման ծրագրերից, ինքնուրույն ներդրումներ կատարել և

դրանից եկամուտ ստանալ, հետագայում դրանք կրկին ուղղելով ոլորտի զարգացմանը:

Ի վերջո, նաև մի հավելում էլ անեմ՝ Հիմնադրամի ստեղծման նպատակում.

Պետությունը հիմնադրամներ ա ստեղծում նրա համար, որ ինչ-որ իքս փուլի այդ հիմնադրամները անցնեն ինքնաֆինանսավորման պրոցեսին: Այսինքն՝ այլևս Հիմնադրամին պետությունը չտրամադրի գումար իր պահպանման ծախսերը հոգալու համար:

Ռաֆֆի Մովսիսյան՝ Արվեստի ոլորտում կա՞ նման հիմնադրամ:

Դավիթ Բանուչյան՝ Երկու հիմնադրամ կա այս պահին գործող, երկուսն էլ նոր են, բայց սկզբունքը ի սկզբանե եղել է այն, որ հիմնադրամները կամաց-կամաց պետք է անցնեն ինքնաֆինանսավորման:

Արմեն Խաչատրյան՝ Տեսեք՝ տարբերությունը. Ինչու՞ Հիմնադրամ, ոչ թե ՊՈԱԿ.

Եթե պետք է լինի հիմնարկ, որը որ ուղղակի պետությունից փողը ստանում է՝ տալիս է, ապա իմաստ չկա այդ ՊՈԱԿ-ը փոխել Հիմնադրամի, այսինքն՝ եթե խնդիրը՝ ուղղակի փող ստանալ և տալն է՝ իմաստը որն է կազմակերպահիրավական ձևը փոխելու:

Ռաֆֆի Մովսիսյան՝ Ճիշտն ասած, քանի որ մենք շրջանառվող փաստաթղթի գոյության մասին իմացանք նախորդ ժողովի ժամանակ, և մտածում էինք, որ փորձենք միասին աշխատելով գնալ, բայց հետո տարբեր հարցազրույցներում նաև լսեցինք, որ կան ներգրավված մարդիկ կինոյի՛ասպարեզից, որոնք որ աշխատել են փաստաթղթի վրա: Ե՛վ պարոն Դանիելյանի խոսքերում կային, որտեղ նա նշում է, որ կինոգործիչների հետ համատեղ է, և՛ տիկին Անդրեասյանի, որ օրենքի նախագծում փոփոխություններ արվեն կինոգործիչների հետ՝ մեզ թվում էր, որ դա գուցե նախարարության առաջարկությունն է, բայց հիմա հասկացանք, որ այս փոփոխությունների նախագիծը՝ Հիմնադրամի առաջարկությունն է և, փաստորեն ձեր տեսլականն է կինոյի զարգացմանը:

Արմեն Խաչատրյան՝ Ես կպատասխանեմ այդ հարցին.

Խնդիրը հետևյալն է. նախագիծը մշակվել է այո՛ ոլորտի մի շարք մասնագետների հետ քննարկումներ ունենալու արդյունքում, ձևավորվել է այս փաստաթուղթը, որը որ

մեր կողմից ներկայացվել է նախարարությանը, նախարարության հետ համատեղ նաև քննարկվել է այս փաստաթուղթը, և բնականաբար եթե նախարարությունը ներկայացրել է արդեն ի դրաֆթ, այսինքն՝ կախել է որպես պաշտոնական փաստաթուղթ, այսինքն՝ կա նաև գերատեսչության որոշակի համաձայնությունը այս պրոցեսների հետ կապված, բայց ի վերջո, ցանկացած իրավական փաստաթուղթ ընդունման գործընթաց ունի: Այսինքն՝ որոշակի գերատեսչություն կամ ինչ-որ համայնք ներկայացնում է իր կարծիքը, ի վերջո, դրա շրջանակներում, հենց ի-դրաֆթ կախելու իմաստը հենց դա է, որ ներկայացվում է ի-դրաֆթում, որից հետո ստացվում են բոլորի կարծիքները, այդ կարծիքները ամփոփելով դառնում է մեկ այլ փաստաթուղթ, որը որ հետագայում նաև շրջանառվում է միջպետական գերատեսչություններով, իրենք էլ տալիս են իրենց կարծիքները, այդ թվում նաև Արդարադատության նախարարությունը, ֆինանսների նախարարությունը և մյուս կառույցները, և այս կարծիքները ստանալուց հետո նոր, վերջնական ձևավորվում է Օրենքը: Եվ մի բան էլ ասեմ՝ եթե ի վերջո, կարող է ընդունելի լինել կամ չլինել, բայց Օրենքը դա՝ պետական քաղաքականության մշակման միջոց է, որն ի վերջո, այդ Օրենքն ընդունողը պետությունն է ու քաղաքականություն մշակողն էլ է պետությունը:

Մենք կարող ենք այստեղ քննարկել մի շարք բաներ, որ այսպես ենք ուզում, այնպես ենք ուզում, բայց ի վերջո, որոշողը պետությունն է և քաղաքականություն մշակող մարմինը Ազգային Ժողովն է: Մեր խնդիրը օրինագիծ ներկայացնելն է, որը որ մենք ներկայացրել ենք:

Դավիթ Բանուչյան՝ Մի բան էլ ավելացնեմ՝ կարծիք կա, որ կինոյի հիմնադրամը և ԿԳՄՍ նախարարությունը առանձին կառույցներ են: Առանձին կառույցներ են բնականաբար, բայց չկա այդպիսի միտում սեպարատ գործողություններ անելու կամ սեպարատ կառույց լինելու: Նույն Հիմնադրամը խոսում է ԿԳՄՍ-ի անունից և նույնը՝ հակառակը: Այնպես որ իմացեք՝ եթե մեզ հետ խոսում եք, ուրեմն նախարարության հետ եք խոսում:

Ռաֆֆի Մովսիսյան՝ Հարց. Ինչ վերաբերում է ապագայում արտադրվող ֆիլմերին. արդյո՞ք արվել են տնտեսական հաշվարկներ, ուսումնասիրվե՞լ է արդյոք միջազգային փորձը, թե օրենքի փոփոխությունների հետևանքով ինչ արդյունքներ կարող են լինել համատեղ արտադրության հետ կապված, հնարավոր կլինի՞ շարունակել համագործակցությունը ինչ-որ երկրի հետ, եթե պետությունը որոշում է, որ իրեն է պատկանելու արտադրված ֆիլմերի գույքային իրավունքները, որի մեջ

մտնում ա նաև հեղինակային իրավունքները: Դա ստեղծում է «պատային» իրավիճակ, որը անհնարին է դարձնելու համատեղ արտադրությունը, քանի որ այլ երկրների պրոդյուսերները ասել են, որ հետևյալ փոփոխությունները անհնարին են դարձնում համագործակցությունը: Մեր կողմից պատրաստել ենք փաթեթ, որը կփոխանցենք հիմնադրամին:

Արմինե Անդա՝ Նախ ես ուզում եմ արձագանքել Ձեր երկու-երեք մտքին.

Դուք մի բան ասեցիք, որն ի դեպ, մի տեղ ձեր հիմնավորումներում կա:

Օրենքը չի համապատասխանում մեր կանոնադրությանը:

Կներեք ինձ, բայց սովորաբար, Օրենքն է արվում ու կանոնադրությունն է Օրենքին համապատասխանում, այսինքն՝ երբ որ Հիմնադրամը ստեղծվում էր, ստեղծվում էր Օրենքի հիման վրա, և Հիմնադրամի կանոնադրությունը պետք է համապատասխաներ աջակցության Օրենքին:

Պետությունն է որոշում քաղաքականությունը.

2021թ. պետությունը որոշել է քաղաքականությունը: Այն բոլոր վերլուծությունների հիման վրա համոզվել է, որ այն տնտեսապես ավելի ճիշտ է լինելու պետության համար, և իր կամքը արտահայտել է Աջակցության օրենքի մեջ:

Դրամագլուխ և կինոարտադրություն.

Օրենքով գրված է, որ դրամագլուխը կարող է ծախսվել կինոարտադրության և կինոժառանգության վրա, և դա չի նշանակում, որ պարտադիր դա պետք է ծախսվի ձեր ֆիլմի վրա: Այո, դուք դրամագլխում աջակցությունների միջոցով առաջացած գումարը նորից պետք է դնեք մրցույթով անցած ֆիլմերի վրա, և այն նորից գնում է կինոարտադրություն: Կինոժառանգությունն էլ այդտեղ ոչ մի խոչընդոտ չունի: Գործող Օրենքով ոչ մի խոչընդոտ չկա, որ դրամագլխի գումարը ծախսվի կինոարտադրության վրա, բայց դա ձեր արտադրած ֆիլմը չի, այլ նույն մրցույթով անցած ֆիլմը: Իսկ ձեր ասած. "մրցույթով չի անցել, բայց մենք ֆինանսավորենք", իսկ ինչո՞ւ մրցույթով չանցած ֆիլմը պետք է ֆինանսավորվի: Տարածումը հասկանում ենք, այո, պետք է գտնվի ձև նույն բյուջեի մեջ լինի:

Կասեմ նաև հետևյալը. ՊՈԱԿ-ը գործում էր հենց այս մեխանիզմով 2006թ.- ից: Օրենքը արվել է նրա համար, որ վերջապես Հայաստանի կինոֆինանսավորումը,

աշխարհի 99%-ի նման, բացառությամբ մի երկու-երեք տոտալիտար երկրների, գա աջակցության մեխանիզմի: Ինչպես աշխատում է ամբողջ Եվրոպան, նույնիսկ Ռուսաստանը: Այսինքն՝ աշխարհը ստեղծում է մեխանիզմներ, որով զարգանում են մի քանի հարյուր արտադրողներ, ոչ թե մեկ Հիմնադրամ:

Պետությունն արդեն իր քաղաքականությունն արել է, իսկ հիմա, այս փոփոխությունների արդյունքում ստացվում է՝ ունենում ենք մի Հիմնադրամ, որը պետությունից ստանում է ողջ ֆինանսավորումը, ունի արտադրելու իրավունք, գույքային իրավունքն այստեղ միանշանակ է: Այսինքն՝ ստեղծվում է մենաշնորհային արտադրող, որը եղել է ՊՈԱԿ-ում 2006 թվականից, և 15 տարիների ընթացքում մենք նույնիսկ չենք եկել աջակցության մեխանիզմին, որովհետև Օրենքը գործի չի դրվում, և այդ մեխանիզմի բացակայությունը անդրադարձել է մեր վրա: Մենք համատեղ արտադրությունները սկսել ենք անել 2019թ.-ից, երբ արվել է միջազգային կոնֆերանս, և միջազգային հյուրերով, նախարարի, հիմնադրամի ղեկավարի, բոլորի հետ միասին ապացուցել ենք, որ միջազգային կոնվենցիան խախտվում է գույքային իրավունքով:

Զառա Զյան՝ Մեր իրավաբանները շատ մանրակրկիտ սթեյթմենթը կտան այս նախագծի վերաբերյալ, որը, կներեք, ամենայն հարգանքով, բայց իսկապես թերի է, և այն փոփոխությունների հետ կապված, զրոյացնելը իրավաբանական ճանապարհով խնդիր չէ, օրինակ՝ վարչական դատարանով: Բայց մենք, բնականաբար չենք գնում այդ ճանապարհով, մենք գնում ենք երկխոսության : Ես համոզված եմ, որ դուք միգուցե ֆինանսների նախարարության շահերից բխելով, և բոլոր նախարարությունների շահերից բխելով ստեղծել եք այս փոփոխությունները, բայց փաստացի մենք հիմա կործանում ենք համատեղ արտադրությունը: Մեր իրավաբանների կողմից արդեն ունենք հստակ նշված խախտումներ կոնվենցիայի, մեր սահմանադրության, մարդու իրավունքների և այլ: Մենք այսօր եկել ենք, ասենք, որ պատրաստ ենք ներդնենք մեր ֆինանսները, մեր իրավաբաններին, պատրաստ ենք ձեզ հետ համագործակցել, հարգել ձեր կարծիքը, խնդրել, որ հարգեք մեր կարծիքը, և ետ կանչեք այս նախագիծը: Նայեք, հենց հիմա մոտ 6 պրոյեկտ հարցականի տակ ա: Դուք դեռ Հիմնադրամ եք: Կարող է՝ դուք հետագայում ուզում եք դառնալ անկախ պետությունից, բայց հիմա դուք անկախ չեք, դուք պետական ստրուկտուրա եք: Հիմա եթե դուք պետական ստրուկտուրա եք, ֆինանսավորում եք մեզ, մեզ հետ չեն համագործակցում մեր եվրոպական գործընկերները: Դա մեր կարծիքը չէ, դա փաստ է: Ինձ թվում է՝ պարոն Բանուչյանը մեզ հետ համամիտ կլինի,

որովհետև թե՛ պարոն Բանուչյանի, թե՛ նախարարի գաղափարը ստեղծված է նրա շուրջ, որ զարգացնենք համարտադրությունը:

Զրուցելով Ռուսաստանի Կինոֆոնդի տնօրենի հետ, իրենք էլ են կարծում, որ սրանով մենք իսկապես «ջարդում» ենք մեր Օրենքը, և որ այն մեր կինոարտադրության զարգացման համար չէ (այնտեղից էլ կլինի հավաստող թուղթ):

Կարինե Սիմոնյան՝ Ավելացնեմ, որ իրենք չունեն ո՛չ գույքային, ո՛չ հեղինակային իրավունք: Իրենց փաթեթի մեջ ամեն ինչ ներկայացված է. ունեն և՛ առանձին վերադարձ շահույթից, և՛ անհատույց՝ առանց գույքային իրավունքների:

Զառա Զյան՝ Նաև գիտեմ, որ պարոն Բանուչյանի համար կարևոր է, որ հիմնարկը զարգանա, նույն տնտեսական առումով ներդրումներ կատարելով, սակայն ես ցանկանում եմ ասել, որ դրանք տեղի չեն ունենալու:

Արմեն Խաչատրյան՝ Հետևյալ փոփոխությունները դեռ քննարկման փուլում են: Մենք խնդիր չունենք փոփոխություններ չանելու, այդպիսի որևիցե դրույթ չկա: Եթե խնդիրը այդ գույքային իրավունքների մասն է, հիմա ավելի մանրամասն ասեմ. ի դրաֆթում տարբերակում, որը որ գնացել է, այնտեղ որոշակի տարբերություն կա, որը որ պետք է գնար: Այստեղ հիմնական խնդիրը նա է, որ Հիմնադրամը կարող է ունենալ գույքային իրավունքներ: Ես տեսել եմ տարբերակը՝ այստեղ գրված է եղել, որ «Ազգային Մարմնի կողմից և իր միջոցով ֆինանսավորված ֆիլմերի նկատմամբ ձեռք է բերում», այստեղ պետք է լիներ, որ «Կարող է ձեռք բերել» : Ինչի կարող է ձեռք բերել, նորից նշեցի, դա Դրամագլխի խնդրի մասին է, որովհետև ի վերջո, կարող է լինել, որ պրոյեկտ, որը որ մենք չենք կարող այդ իրավունքից զրկենք Հիմնադրամին և որ Հիմնադրամի խորհուրդը, որը որ բաղկացած է և՛ ոլորտի մասնագետներից, և՛ պետական այրերից, որոշում է, որ ինչ-որ պրոյեկտի մեջ նա ներդրում է անում ու այդ ներդրումից գումար է ուզում ստանալ: Այստեղ ինքը գույքային իրավունքներ կարող է ձեռք բերել: Այդ «կարող» է բառն է, որը որ ձեզ շփոթության մեջ է դրել, որ պարտադիր է: Բնականաբար՝ ոչ: Այն պրոցեսները, որը մենք նախատեսել ենք պետական ֆինանսավորման միջոցների մասին, դրանք այդպես էլ մնացել են: Խնդիրն այստեղ ուրիշ է.

Խնդիրն այնէ, որ կարող է լինեն պրոյեկտներ, որը հենց մենք ենք ուզում ֆինանսավորել: Նույն Ռուսաստանի օրինակը որ բերեցիք, նույն Կինոֆոնդում օրինակ՝ եթե առաջին պրոյեկտը ֆինանսավորվում է, ապա այդ նույն պրոյեկտի

երկրորդը որ գալիս է՝ այդտեղ ինքն արդեն հանդես է գալիս որպես համաֆինանսավորող: Այս դեպքում երկու բան ենք անում,

Ունենք առանձին պետական ֆինանսավորում, որը որ տրամադրվում է ուղիղ: Պետական ֆինանսավորումը դրամագլուխ մուտք չի գործում, ու այս Օրենքով էլ է այդպես: Պետական ֆինանսավորումը տրամադրվում է առանձին մրցույթները ֆինանսավորելու համար: Դրամագլուխը՝ առանձին ֆինանսավորման միջոցներ է, որը որ ձևավորվում է այլ աղբյուրներից: Օրինակ՝ ազգային ֆիլմերի ցուցադրման ժամանակ ֆինանսավորվող ռեկլամներից որոշակի տոկոս է ստանում, կամ ինչ-որ մեկը կարող է ներդրում անել: Կամ կարող է լինել որոշակի ծրագիր.

Օրինակ ինչ-որ մեկը գումար է տալիս, ասում է՝ ես ուզում եմ կինո նկարել, բայց ուզում եմ, որ Հիմնադրամի միջոցով նկարվի՝ պետական երաշխավորությամբ, այսինքն՝ ինչ-որ մարմին, որը որ կիսապետական է, որը ձեր միջոցով գնա ֆինանսավորումը և ֆինանսավորման նկատմամբ հսկողությունը: Եթե դրա շրջանակներում մենք ունենում ենք դրամագլուխ, որը առանձին ֆոնդ է և ֆինանսավորում է, մենք դրա մասին ենք խոսում: Նույն Ռուսաստանի նման՝ ունի երկու ֆինանսավորման աղբյուր: Մեկը՝ դա ազգային ֆիլմերի համար է, որը ֆինանսավորում է նրանց մշակույթի նախարարությունը, մյուսը՝ խաղարկային ֆիլմերի կամ այլ ֆիլմերի, բիզնես պրոյեկտի համար ֆինանսավորում է ֆոնդը:

Տիգրան Առաքելյան՝ Մի հարց ունեմ, որ պետք է խնդրեմ. Դուք Ձեր խոսքի մեջ ասացիք, որ գործող Օրենքը հակասում է օրենքներին, կոնվենցիային: Մենք նամակով էլ էինք գրել, որ մեզ գրավոր ուղարկեք, թե Կոնվենցիայի որ կետերին է հակասում:

Այստեղ գաղափարական փոփոխություն է ստացվում Հիմնադրամի աջակցող լինելու դերում:

Պարոն Բանուչյանը միշտ աջակցողի դիրքում է, տիկին նախարարն էլ «Ոսկե ծիրան»-ի բացման ժամանակ ասել է, որ պետությունը աջակցելու է կինոողորտին: Իսկ հիմա Օրենքի նախագիծ է շրջանառում, որտեղ գրված է, որ «Հիմնադրամը աջակցող չէ»: Եկեք այս կոնցեպտուալ մասը ճշտենք ու դրանից հետո եկեք այդ կետերի վրա աշխատենք: Որովհետև եթե Հիմնադրամն աջակցող չէ, այլ արտադրող է, մեզանից մեկն է, ապա եկեք հասկանանք՝ ով է աջակցող, միասին գնանք, տեսնենք, թե մեզ ով կաջակցի:

Դավիթ Բանուչյան՝ Իրավական տեսանկյունից քննարկումներ պիտի արվեն: Թյուր կարծիք կա, որ կինոյի հիմնադրամը պետք է փող տվողը լինի միայն ինչ-որ ծրագրերի, ֆիլմերի և այլն և այլն: Բայց որտե՞ղից են առաջանում այդ գումարները ի վերջո: Այսօր կան ծրագրեր, որոնք կապիտալ ներդրման կարիք ունեն, օրինակ՝ ծրագիր ունենք կինոքննադատության դպրոց հիմնելու հետ կապված, կրթության մեծ պակաս կա և այս ամենը պետությունից խնդրելը մեծ ռեսուրս է պահանջում: Սա իրականացնելու համար Հիմնադրամը պետք է ունենա գործիքակազմ գումարներ հավաքագրելու և ներդրումներ անելու տարբեր ուղղություններով: Միշտ կարիք ա առաջանում, որ կինոգործիչները տարբեր փառատոնների ժամանակ գնան մասնակցելու, իսկ հիմնադրամը չունի միջոցներ, միշտ մի բան մտածում ա, որ կարողանա օգնել կինոարտադրողին ներկայանալ: Մեր անելիքն էլ էդ ա, մի ձև մեր արտաբյուջեն լցնել, որ կարողանանք ծրագրեր իրականացնել:

Արմեն Խաչատրյան՝ Մեկնաբանեմ «հիմնադրամը աջակցող չի» արտահայտությունը: Հիմնադրամը աջակցող է և մնալու է աջակցող: Մենք Օրենքից այդ տերմինն ենք հանել, որովհետև կարծում եմ՝ այդ տերմինի իմաստը ընդհանրապես չկա, որովհետև այդ եզրույթը արդեն իսկ սահմանված է այլ իրավական ակտերով: Դուք ասում եք՝ աջակցողը այն իրավաբանական կամ ֆիզիկական անձն է, որը անհատույց դրամական միջոցներ է հատկացնում ֆիլմերի ստեղծման, տարածման և պահպանման նպատակով՝ առանց այդ գործընթացներին միջամտելու և գույքային իրավունքներ ձեռք բերելու: Որպես այդպիսին, ցանկացած ֆիզիկական անձ կարող է այդ գործառույթները իրականացնել առանց հետևյալ սահմանումը ունենալու, եթե դիտարկենք Հիմնադրամի տեսանկյունից, Հիմնադրամը չի կարող տրամադրել ֆինանսական միջոցներ, և դրա վերահսկողությունը չիրականացնի, դա պետության բյուջետային միջոցների և այլ իրավական ակտերին հակասում է:

Շատ դեպքերում ֆինանսավորումը իր նպատակով չի օգտագործվել կամ արդյունքը չի հանձնվել: Գույքային իրավունքները ձեռք բերելը արտադրության իրավունքին միջամտել չի համարվում: Պայմանագրերում արտադրության փուլին հետևողական լինելը չի համարվում միջամտություն:

Մեր խնդիրը հետևյալն է. այն, ինչը որ պետական ֆինանսավորմամբ գալիս է՝ այդտեղի գործընթացներին գույքային իրավունքների հետ մենք խնդիր չունենք: Մեր խնդիրը դրամագլխի հետ է կապված: Դրամագլխի շրջանակներում, ի վերջո, Հիմնադրամի խորհուրդը կարող է որոշում կայացնել նոր ֆիլմ ստեղծելու: Օրինակ՝

եթե մի հատ ՍՊԸ գա և որոշի ինչ-որ մի հատ կինո նկարել՝ դա ձեր ոլորտը խանգարե՞ց:

Ռաֆֆի Մովսիսյան՝ Բայց դա ՍՊԸ է, որը կարող է ունենալ այն պետական լիազորությունը, որն իրեն Օրենքով չի արգելում անի իր արտադրությունը:

Արմեն Խաչատրյան՝ Եթե Հիմնադրամ է գալիս իքս ՍՊԸ, ֆինանսավորում է տրամադրում, խնդրում է ֆիլմ ստեղծի: Մասնավոր դեպքի մասին է խոսքը:

Հովհաննես Գալստյան՝ Կարող է այդ ՍՊԸ-ն դուք եք բացում: Ուրեմն, օրենսդրական փոփոխությունների ընդհանուր ստրատեգիան, ռազմավարությունը այն ուղղությամբ է, որ Հիմնադրամին տալիս եք արտոնություններ և մենաշնորհներ՝ արտադրող ընկերություններից վերցնելու հաշվին: Այսպես է ընկալել դա ամբողջ կինոհամայնքը: Ամբողջ կինոհամայնքը շատ բազմաշերտ է, և եթե բոլորը մի կերպ են ընկալել՝ ուրեմն այդպես է: Գույքային իրավունքներն անհնարին է մեզանից օտարել: Գույքային իրավունքներն օտարելը մեզանից անհնար է, որովհետև այստեղ հավաքված են արտադրողները, որոնց ֆիլմի ընդհանուր բյուջեի 20-30-ից ավելին դուք չեք ներդնում, որ գույքային իրավունքի մասին խոսք գնա: Այսինքն՝ օրենսդրական փոփոխությունները պետք է բերեն մասնագետների հետ քննարկելու, մասնագիտական դաշտը ներգրավվելու հետ մեկտեղ, որպեսզի օրենսդրական փոփոխությունները խթանեն արտադրողների զարգացմանը: Մի քանի կետեր կան, որ մենք համարում ենք, որ այդ օրենսդրական փոփոխությունները կազմել են մարդիկ, որոնք պրոֆեսիոնալներ են, բայց ոչ կինոյի, այսինքն՝ տնտեսագետներ, իրավաբաններ, բայց դա նույնիսկ վիրավորում է մեր մասնագիտական ինքնասիրությունը: Այնտեղ այնպիսի բաներ են գրած, որ ազգային ֆիլմի ստատուսը իջեցնենք: ՀՀ-ում գրանցված արտադրողը պետք է արտոնություններ ստանա, իսկ այստեղ հակառակն է:Ասում եք՝ եկեք ֆոնդին ուժեղացնենք: Բայց ինչի՞ ուժեղացնենք:Ասում եք՝ ֆոնդը դարձնենք արտադրող: Այսինքն՝ մի հատ ՍՊԸ կգա, ով Հայաստանում չի ապրում, օրինակ՝ ձեր հորեղբոր տղան կգա, կասեք՝ ուրիշ ՍՊԸ է: Կներեք այս բացատրության համար, բայց ես երկար եմ ապրում, գիտեմ դա ոնց է աշխատում:

Այո, մենք պետք է մասնակցենք այդ օրենսդրական փոփոխությունների մշակմանը, ստեղծմանը, և տանք այնպիսի պայմաններ, որոնք խթանում են անկախ արտադրողներին:

Այստեղ բոլորս ուզում ենք ստեղծենք նպաստավոր պայմաններ՝ օրենսդրորեն ամրագրված: Փոխենք դաշտը, ցավոտ կլինի, այո ձեզ համար, որպես հսկողներ: Բայց մենք արտադրողներ ենք, ստեղծագործողներ ենք, չի կարելի այդ մարդկանց հետ այդպես վարվել: Կնեղանան, կթողնեն- կգնան:

Ամբողջ իմ ասածը նրան է վերաբերում, որ այս օրենսդրական փոփոխությունների բովանդակությունը մեզ վիրավորում է: Խոսում եմ կոնկրետ Ֆեդերացիայի անդամների անունից: Ի վերջո անհնար է միջազգային պայմանագրերը ստորադասել տեղական պայմանագրերին, խախտել կոնվենցիաներ, չեք կարող անել այդ ամենը:

Ֆեդերացիան անցկացնում է մոնիտորինգ՝ հակասությունների հետ կապված, ու խախտումներ գտնելու դեպքում հետևողական է լինելու, և տեղյակ կպահի: Էս քննարկման հետ կապված չի, բայց մեծ խնդիր է եղել մրցութային հանձնաժողովի չվերահսկողությունը, մենք ուզում ենք դրան անդրադառնալ: Մեր խնդիրն է՝ դաշտը ապականումից դուրս բերել:

Զառա Զյան՝ Եկեք ռեալ նաև քաղաքական խնդիրներից խոսենք: Արդեն որոշ կառույցներ դրսում անհանգստացած են Հայաստանում այս Օրենքի փոփոխությունների վերաբերյալ: Թե՛ դրսի ֆոնդերը, թե՛ մյուս կազմակերպությունները տեսնում են նաև մարդկային իրավունքների խախտում : Մենք դա հատուկ չենք արել, այլ ուղարկել ենք կարծիք ստանալու համար և ձեզ օգնելու նաև նպատակով՝ թույլ չտալ այս սխալների է՛լ ավելի զարգացումը: Արդեն մեծ խոսակցություններ են գնում և մեր քաղաքական դաշտի համար սա լավ չէ, որովհետև, օրինակ՝ մայիսին 14, երբ որ Կաննում աշխատում էինք, որպեսզի մոտիվացնեինք կազմակերպություններին ներդրումներ անել Հայաստանում, այս աղմուկի հետևանքով արդեն իսկ կորցնում ենք շատերին և մեր աշխատանքը զրոյանում է:

Իմ կարծիքով՝ Օրենքի փոփոխությունները կազմվել են լոկալ խնդիրների հիման վրա, իսկ գլոբալ խնդիրները, գաղափարային թեման հաշվի չեն առնվել: Երևի թէ պետք է հարց առաջանար, թե ինչու ամբողջ աշխարհում գույքային իրավունք չկա, աջակցությունը միջին նույնիսկ ոչ շատ զարգացած պետություններում առկա է , իսկ Հայաստանում փոփոխության մեջ անհետացել է: Եկեք միասին այս խնդիրները շտապ լուծենք, որովհետև մի օր հենց Նախախարը բոլորիս կկանչի և հարց կտա, թե այս ինչ եք անում: Էլի կարա լինի գումարի վերադարձ, եկեք տրամաբանական անենք:

Արմինե Անդա՝ Կինոյի ֆինանսավորման մեխանիզմը ի սկզբանե Օրենքի է վերածել Ֆրանսիան: Աջակցության մեխանիզմը իրենից վերցրել են՝ կինոն զարգացնելու նպատակով: Հետո եղել է Կոնվենցիան, որն ունի հստակ կետեր դրա մասին՝ պետական սեփականություն չի կարող լինել համատեղ արտադրության դեպքում: Դա ապացույցների կարիք չունի:

Ազգային մարմինը, որը առանց մրցույթի ստանում է պետության գումարը, չի կարող լինել արտադրող: Ինքը արտադրողի կարգավիճակ, գույքային իրավունք չի կարող ունենալ: Նույնիսկ, եթե մեկը գալիս է արտադրության համար, ասում եք. արտադրող ես՝ մասնակցիր մրցույթին, աջակցություն ստացիր: Արտադրող չես՝ գնա արտադրող գտիր: Վերջիվերջո, Հայաստանում շատ արտադրողներ կան: Միակ ձևը դա է: Ձեր գործը այն է, ինչ-որ Դուք արել եք Հունաստանում՝ հուշագիր եք ստորագրում, արդյունքում բերում եք համատեղ արտադրության երկկողմ պայմանագիր: Այսինքն՝ պետությունը պետության հետ պայմանագիր է կնքում, արտադրողը՝ արտադրողի հետ, քանի դուք Ազգային մարմին եք: Դուք ստեղծել եք մի փաստաթուղթ մենաշնորհային արտադրողի, որով սպանում եք համատեղ արտադրությունը: Ամբողջ փաստաթուղթը այդ կոնցեպտի շուրջ է, հետևաբար սրա վրա աշխատելն անհնար է: Բայց մենք դեմ չենք գործող Օրենքի վրա ձեր ասած խնդիրներն ու վերադարձի թեման նստել, միասին աշխատել: Մեր առաջարկը հետևյալն է.

Այս փաստաթուղթը ետ կանչել, միասին նստել, ձևավորել լավագույն խումբը, հանել գործող Օրենքի հակասությունը, եթե կա, կա՛մ Սահմանադրության, կա՛մ կոնվենցիայի հետ: Եթե խնդիր կա բյուջեի հետ կամ վարձութային վկայականի հետ, նստենք, միասին փոխենք դրանք, այդ թվում՝ ոնց անենք օրինական վերադարձ՝ ոչ համամասնական, այլ տրամաբանական, օրինակ՝ լիամետրաժ ֆիլմերից, որին մենք դեմ չենք, ոնց մշակենք, որ դա լինի օրինական և չվնասի մասնավոր արտադրությանը և համատեղ արտադրությանը, որոշակի օգուտ բերի Հիմնադրամին:

Դավիթ Բանուչյան՝ Բացարձակ դեմ չենք ձեր առաջարկին, բայց ժամկետների հետ խնդիր ունենք: Նախագիծը հետ կանչելու տրամաբանություն չեմ տեսնում: Մենք կարող ենք հենց հիմա էլ տարբեր կետերի հետ կապված քննարկումներ կազմակերպել: Հիմա մենք նաև շատ խնդիրներ ունենք վարձութային վկայականի ժամկետների հետ կապված, որովհետև միայն հոլիվուդյան ֆիլմեր ցույց տալու համար օրենք ենք խախտում, ժամկետներ ենք խախտում: Խնդիր ունենք նաև դրսի դիստրիբյուտորների հետ:

Տիգրան Առաքելյան՝ Պարոն Բանուչյան, գիտեք ինչի է նման, որ Օրենքի մեջ ինչ-որ խնդիր կա վարձութային վկայականի հետ կապված, բայց բերում եք մի փաստաթուղթ, որը գլոբալ փոխում է ռազմավարությունը:

Արմեն Խաչատրյան՝ Ձեր կողմից բարձրացված խնդիրները զետեղված են ամենաշատը 3-4 հոդվածի մեջ. մեկը՝ այդ աջակցող հասկացողության վերացումն է, մյուսը՝ համատեղ արտադրության հետ է կապված: Համատեղ արտադրություն նորմը ամբողջությամբ համապատասխանեցված է Կոնվենցիային:

Կարինե Սիմոնյան՝ Այնտեղ կետ կա, որ ասում է՝ հետարտադրական փուլը համատեղ արտադրությունների ժամանակ պետք է արվի համատեղ երկրներում: Ինչու՞ եք ինձ սահմանափակում՝ որտեղ ես անեմ post production-ը՝ հետարտադրությունը: Ստեղծագործական խումբը ինչպե՞ս եք կրճատել. արդյո՞ք բեմադրող նկարիչը ստեղծագործող չէ, զգեստների նկարիչը, դերասանը, դիմահարդարման նկարիչը:

Արմինե Անդա՝ Դուք ստեղծագործական խումբը շփոթել եք հեղինակային խմբի հետ:

Արմեն Խաչատրյան՝ Ամբողջ փոփոխությունների փաթեթը ինքն իրենով 18 հոդված է: Այդ 18 հոդվածների մեջ մեծ մասը հասկացություններ են, մնացածը 2-3 հոդվածի մասին ենք խոսում, որոնք խնդրահարույց են: Այս պահին, քանի որ պետական իրավական գործընթացը սկսել է, մենք բոլորիդ առաջարկում ենք ներկայացնել ձեր դիտարկումները, որոնք գտնում եք, որ փոփոխման ենթակա է: Նախագիծ հետ կանչելու գործընթաց, որպես այդպիսին չկա, եթե նախագիծը հրապարակվել է արդեն՝ չի նշանակում, որ փոփոխություններ չեն կարող լինել: Մենք առաջարկում ենք, որ փոփոխությունները քննարկվեն, որովհետև դեռ ոչ մի բան չի ուղարկվել: Ի դրաֆթում հրապարակելու իմաստը, կարծիքներ ստանալու և քննարկելու համար է:

Զառա Զյան՝ Մենք եկա՞նք չէ նախարարի մոտ, խնդրեցինք՝ մի կախեք այդ թուղթը: Հիմա ձեր խնդիրը նա է, որ դուք ասում եք՝ կախել ենք, երկար՝ կտևի: Ես հասկանում եմ՝ Դուք ինչ եք ասում, բայց երբ անում էիք այդ թուղթը, չէի՞նք կարող այսպես հավաքվել: Ես համոզված եմ, որ դուք նոր բաներ լսեցիք ու համամիտ եք ու հասկանում եք, որ սխալ բաներ են տեղի ունեցել: Ճանապարհը երկարացրեցիք: Հիմա մենք ուզում ենք կրճատել այն: Մենք երաշխավորում ենք մեր մասնակցությունը փոխադարձ, հարմար՝ Օրենքը մշակելու համար, եթե իհարկե, չեք ուզում ստեղծել տոտալիտար ռեժիմ: Եկեք գնանք կարճ ճանապարհով և նույն սխալները թույլ չտանք:

Արմեն Խաչատրյան՝ Օրենքը հետ կանչելու գործընթաց, որպես այդպիսին, չկա: Երբ որ դու ի դրաֆթում նախագիծ ես կախում՝ դա դեռևս չի նշանակում, որ հենց այդ նախագիծը պետք է շրջանառես գերատեսչություններում: Եթե նախագիծն ինքն իրենով կախված է, այդ նախագծի շրջանակներում դու կարող ես հետո ուրիշը կախես: Նախագիծը երբ որ կախված է՝ դրա հետ կապված կարծիքներ են հավաքվում: Հիմա տվեք ձեր կարծիքները, և հետո այդ նախագիծը գերատեսչություններ ինչ տեսքով կգնա, ձեր կարծիքները կտաք, վերջնական կքննարկենք ձեր կարծիքների հիման վրա: Թե ոնց կփոխվի նախագիծը, թե ինչ կդառնա, հետո նոր կգնա այլ գերատեսչություններ՝ բնականաբար ձեր կարծիքները և ձեր ամբողջ դիտարկումները ստանալուց հետո մենք ևս մեկ անգամ պետք է քննարկենք վերադաս մարմնի հետ, որը որ նախարարությունն է և ի վերջո, նախարարության վերջնական դիրքորոշումը ստանալուց հետո նոր գերատեսչություններում շրջանառելը մենք չենք անում: Դա նախարարության ֆունկցիան է, նրա գործառույթը: Ամսի 8-ին չի գնալու գերատեսչություններ, մինչև վերջնական մշակված տարբերակ չլինի: Մենք պետք է ստանանք ձեր բոլորի կարծիքները: e-draft-ում դնելը ինքնանպատակ չի, տվեք ձեր կարծիքները, փոփոխությունների անհրաժեշտությունը հասկանալու համար:

Հովհաննես Գալստյան՝ Դուք կարծիքներ եք ուզում, որ հետո բանի տեղ չդնեք: Ի՞նչ երաշխիք կա, որ մեր կարծիքները հաշվի կառնվեն:

Տիգրան Առաքելյան՝ Պարոն Խաչատրյան, կներեք, բայց նախկինում եղած մեր փորձառությունից ելնելով, նույն բանը եղել էր, երբ կանոնակարգը հայտարարելուց հետո մենք կարծիքներ, մեկնաբանություններ գրեցինք, բայց դրանք հաշվի չեն առնվել:Ես գիտեմ, որ էդ ընթացքում գիշեր-ցերեկ աշխատել ենք այդ թեմայի շուրջ, կարծիքները դրվեցին e-draft-ում, լռություն էր.ինչ-որ շրջան, հետո ուրիշ կանոնակարգ դրվեց ու մրցույթը հայտարարտվեց: Այ էդտեղ համայնքը զգաց, կամ լավ ես զգացի, որ արձագանք չեղավ, մեկը չասեց, մի օր մեզ չկանչեցին՝ ասեն խի եք էս սենց գրել և այլն, որովհետև մարդիկ աշխատել են: Ու հիմա նույն ճանապարհն եք ասում՝ դնենք էնտեղ, մեկնաբանեք, չգիտեմ՝ ինչ…որտեղ ա՞ երաշխիքը:

Հովհաննես Գալստյան՝ Կա՞ն կետեր, որ Ձեզ համար պարտադիր են:

Արմեն Խաչատրյան՝ Չէ, պարտադիր ոչինչ չունենք: չկան, մենք ունենք Օրենքի նախագիծ, մենք չունենք պարտադիր ինչ-որ բաներ:

Արմինե Անդա՝ Մի հատ կարդացեք, երևի միայն երկու կետ կա, որ լավ է. մեկը որ կառավարության որոշումից բերել են նախարարության որոշում մրցույթների կարգը:

Քեշբեքը մի կողմ եմ դնում, դա դեռ չեմ ուսումնասիրել: Մնացածի մեջ այդ մի կետից այն կողմ չկա մի կետ, որ կարելի է պրոֆեսիոնալ առումով համաձայնվել: Այդտեղ էլ մի հատ նյուանս կա. կանոնակարգի հաստատումը նախարարությունից հանել են, դրել են իրենց վրա, ինչին ոլորտը, ի դեպ համաձայն չէ:

Դավիթ Բանուչյան՝ Եկեք մի հատ սկզբունքը հասկանանք. մեր առաջարկությունը հետևյալն է. ուղարկեք ձեր կարծիքները, հետո մի հատ էլ քննարկում կազմակերպենք, հերթով անցնենք: Բայց կա ուրիշ տարբերակ. հերթով, կետ առ կետ քննարկենք: Սա երկրորդ տարբերակը:

Արմինե Անդա՝ Երրորդ տարբերակն էլ մենք առաջարկեցինք. միասին առաջարկենք նախարարին, որովհետև խախտվում ա կոնվենցիան, համատեղ արտադրությանն ա խանգարում, գույքային իրավունքի շուրջ ա հավաքած կոնցեպտը, որին համայնքը դեմ է:

Դավիթ Բանուչյան՝ Ուղարկեք մեզ ձեր կարծիքները, մենք կկազմակերպենք էլի քննարկում, քննարկման ընթացքում քննարկենք կետ առ կետ բոլոր կարծիքները, և չենք գնա էնքան ժամանակ, մինչև վերջնական բան չանենք:

Հովհաննես Գալստյան՝ Քո կարծիքով՝ ինչքան ժամանակ կտևի, որ էդ կետերը քննարկենք:

Դավիթ Բանուչյան՝ Մի հատ հարց, Արմինե ջան. եթե հիմա ետ կանչեցին, ինչքա՞ն ժամանակ է պետք Օրենքի վրա փոփոխություններ անելը:

Արմինե Անդա՝ Հաստատ ավելի կարճ, քան սրա վրա աշխատելը: 100 %

Հովհաննես Գալստյան՝ Չէ, չէ, ինչ ես ասում: Էդ ընթացքում էլ կարան մրցույթ չանեն, կստացվի տարի ու կես:

Արմինե Անդա՝ Մրցույթը դրա հետ կապ չունի, մրցույթը արդեն գնում է: Ավելի կարճ ժամանակում ա հնարավոր եղած Օրենքը փոփոխել, քան սրա վրա աշխատել:

Զառա Զյան՝ Պարոն Բանուչյանը, կներեք ժողովուրդ, հարց տվեց համագործակցության. ասում ա, եթե հանում են նախագիծը՝ ինչքան ժամանակ է մեզ պետք, որ Օրենքի վրա աշխատենք

Արմինե Անդա՝ Մի ամիս:

Դավիթ Բանուչյան՝ Մի ամիս հիմա էլ ունենք, եկեք հենց սրա վրա էլ աշխատենք:

Արմինե Անդա՝ Սրա համար մի ամիսը քիչ ա, ամեն ինչ պետք ա փոխել, սաղ տանենք նրա հետ համեմատենք, իսկ նրա վրա ավելի արագ կլինի: Վերադարձի թեման մտածում ենք, անում ենք, եթե ուզում եք, և եթե օրինական ստացվում ա, ու ինչն ա ձեզ խանգարում, դա: Լավ սենց ասեմ, երկու շաբաթ, սա հանում եք, նրա վրա աշխատում ենք երկու շաբաթում:

Արմեն Խաչատրյան՝ Դուք հիմա ասում եք՝ գնանք գործող Օրենքի վրա, անենք որոշակի փոփոխություններ:

Ռաֆֆի Մովսիսյան՝ էն ինչը դուք ասում եք խախտում ա կոնվենցիաները, հակասահմանադրական ա, խանգարում ա ձեր գործունեությանը, կինոթատրոններին, դրանք ասեք՝ փոխենք: Վերադարձման օրինական ճանապարհ կա, անենք: Ավելի շուտ կլինի:

Արմեն Խաչատրյան՝ Էն ինչը մենք գտնում ենք, որ փոփոխման ենթակա է, և քննարկելով տարբեր կառույցների և մարդկանց հետ, արդեն գրված, ներկայացված ա: Էն ինչը, որ դուք պետք ա կարծիք ներկայացնեք, մենք չենք կարող հետ գնալ, նորից նույն բաները գրել, մենք գրել ենք արդեն: Վերցրեք մեր կարծիքը, ինչ որ մենք գրել ենք, և խնդրում եմ տվեք ձեր դիտարկումները մանրամասն, եթե կա նաև գործող Օրենքի հետ կապված այլ փոփոխություններ, որ դուք ուզում եք լինի, բայց մենք չենք նկատել, կամ դուք գտնում եք, որ գործող Օրենքը սենց ձևակերպվեր ավելի լավ կլիներ, էդ ամբողջը վերցրեք, ձեր կարծիքները գրեք, տվեք: Մենք պատրաստ ենք ցանկացած կարծիք լսել, քննարկել: Եթե դուք ուզում եք կարծիք ներկայացնել, որը որ միանշանակորեն ընդունվելու ա, դա ոչ մեկ ձեզ չի կարա երաշխավորի, դուք հիմա եկել ասում եք, մենք ինչ գրենք, տենց էլ տարեք արեք:

Զառա Ջյան՝ Ոչ մեկ չի ասում տենց բան: Մեզ ասեք՝ ռեգլամենտը ոնց ա՞: Ուղարկեցինք, հետո ի՞նչ ա տեղի ունենում:

Արմեն Խաչատրյան՝ Ուղարկում եք ձեր կարծիքները, դիտարկումները, նենց չի որ մենակ դուք եք, e-draft-ում լիքը մարդ ա գրում, մենք ամբողջը հավաքում ենք, դիտարկում ենք: Դրա հիման վրա ստեղծվում ա մի քանի տարբերակներ, ու հետո էդ տարբերակները քննարկվում ա արդեն գերատեսչության հետ: Որովհետև ի վերջո, քաղաքականությունը մշակողը ինքն ա: Որ տարբերակը, որ գերատեսչությունը , ի վերջո, ընդունելի կհամարի՝ էդ տարբերակը նորից կշրջանառվի: Որը որ վերջնական

փաստաթուղթ կդառնա, գերատեսչության հետ քննարկած, բնականաբար նորից կտանք ձեզ, որ դուք ի վերջո, քննարկվել ա, ձեր առաջարկություններն էլ դիտարկվել ա, արդեն դուք ձեր դիրքորոշումը կհայտնեք: Եթե նույնիսկ e-draft-ում չկախվի այդ թարմացված տարբերակը, ձեզ բոլորիդ կտրամադրվի: Գրություններով, նույն ձևով, բոլորին կտրամադրվի: Կարանք նորից e-draft էլ կախենք, տարբերություն չկա:

Ռաֆֆի Մովսիսյան՝ Եթե կարանք e-draft կախենք՝ ամենալավը կլինի

Արմեն Խաչատրյան՝ Կփորձենք նորից e-draft էլ կախենք: Ջուտ ժամկետային մասով չգիտեմ, էդ չեմ խոստանում, բայց էն, որ գիլդիաներին, ասոցիացիաներին, այս հանձնաժողովի անդամներին անձնապես, ոլորտին կտրամադրվի: Առնվազն, վերնջական նախագծի տարբերակը մեր կայքում՝ Հիմնադրամի կայքում կտեղադրվի, որ դուք կարողանաք ունենալ կարծիքները: Հաստատ կլինի, էդ չի քննարկվում: Սա ա գործընթացի ամբողջ պրոցեսը:

Զառա Զյան՝ Ոնց եք դուք կարծում, ընդունենք մենք գնում ենք էդ գաղափարով, որ միասին, իսկապես, փորձում ենք միմյանց աջակցել, հիմա նախագիծը հանվում ա, սա կքննարկենք, ոնց եք դուք կարծում, միգուցե էս բոլոր նկատառումները, որ մենք ձեզ ասեցինք, հիմնականում, որը կախված ա դրսի հետ, որովհետև ես հիմա շատ անկեղծ կոնկրետ իմ պահով էլ շատ նահանգստացած եմ, որովհետև ասենք 30%-ի չափով կոպրադուկցիա պիտի լիներ, մի ֆիլմի, որի բյուջեն 4 միլիոն է, հիմա էդ մարդիկ իմ հետ չեն կարանալու ոչ մի ձև պայմանագիր կնքեն: Ու էդ շուխուռները սկսում են գնալ և այլն: Հարցս հետևյալն է՝ միգուցե մենք փորձենք գերատեսչությանը էս ամենը ներկայացնենք, որ ձեզ էլ օգնենք, դուք էլ ձեր կողմից՝ մեր քոմենթներով կներկայացնեք, որ հասնենք ինչ-որ մի ընդհանուր նպատակի:

Արմեն Խաչատրյան՝ Եթե դուք տաք ձեր բոլոր կարծիքները մեզ, կարծում եմ գերատեսչության հետ, ինչ-որ հանդիպումի շրջանակներում արդեն այս մասին խոսել եք: Երբ որ դուք թղթի տեսքով, մեյլով, կապ չունի, նաև էս քննարկումը կարձանագրենք, բայց, եթե կա ավելի դետալային գրված տեքստեր, ասենք օրինակ՝ էս ինչ դրույթը ձևակերպել էս ինչ ձևով, եթե կան այդպիսի բաներ, դրանք խնդրում եմ տվեք, մենք ամենակարճ ժամանակահատվածում էս ամբողջը ամփոփելու ենք ու գնանք գերատեսչության հետ քննարկման: Մենք խնդիր չունենք որ դուք հարց բարձրացնեք, մենք մեկա գնալու ենք քննարկման: Չենք կարա առանց գերատեսչության կարծիքը հաշվի առնելով ինչ որ բան անենք:

Արմինե Անդա՝ Մենք հիմա էս փաստաթղթի հետ կապված, պիտի ամեն կետի հետ գրենք, մենք առաջարկում ենք սենց ու ամբողջի վրա, որովհետև ամեն մի հասկացությունը որոշակի իր մեջ բան է պարունակում:

Արմեն Խաչատրյան՝ Ընդհամանը 7 էջ

Արմինե Անդա՝ Չէ, հիմնավորումներն էլ հետը, որովհետև հիմնավորումների մեջ էլ կան տարօրինակ բաներ: Հիմա որն է ավելի հեշտ:

Զառա Զյան՝ Իրոք բարդ ա: Գումարածախսային էլ ա սա, հասկանու՞մ եք:

Արմինե Անդա՝ Հիմա ո՞րն ա ավելի հեշտ՝ վերցնել 5 հատ կետ փոխել գործող Օրենքում, թե՞ վերցնել նախագծի բոլոր կետերը հերթով վերցնել ու ասել՝ սա սխալ ա, սա սխալ ա:

Զառա Զյան՝ Եկեք իրավաբանների հետ էլ խորհրդակցենք, թե որն է ավելի հեշտ ճանապարհը: Սրա վրա Օրենք մշակել, թե էն մշակածը փոփոխել:

Տիգրան Առաքելյան՝ Մի բան ասեմ ֆիքսենք էլի, դա շատ կարևոր ա. հիմնադրամի դիրքորոշումը էդ տեսանկյունից: Հիմնադրամը՝ դա կառույց ա, որը ստեղծված ա, որ աջակցի: Դա ձեր տեսակետն ա, գաղափարը: Հիմնադրամը ստեղծված ա, որ աջակցի արտադրողներին՝ ինձ Ռաֆֆիին, Հովհաննեսին,Կառային, մյուսին, որ մենք կարողանանք մեր ֆիլմերը արտադրենք, գնանք համարտադրենք, գնանք փառատոններ, անենք էս ամեն գործունեությունը, ձեր նպատակը էն ա, որ մենք զարգանա՞նք տենց: Ես ուզում եմ ձեզանից էդ ուղիղ լսեմ:

Դավիթ Բանուչյան՝ Քանի որ սենց հարց ես տալիս, նշանակում ա, որ կա որոշակի պատ Հիմնադրամի և արտադրողների միջև: Կա ինչ-որ անհասկանալի, ինչ-որ տարաձություն: Այո, էդ տարաձությունը նաև Օրենքն ա: Էդ Օրենքի շրջանակում քննարկումները բերել ա նրան, որ կինոյի հիմնադրամը և արտադրողները ավելի մտերիմ են լինելու և ավելի գործընկերային են լինելու: Էս նաև էդ պրոցեսին ա տանելու:

Տիգրան Առաքելյան՝ Ձեր նպատակը ո՞րն ա՝ մենք զարգանանք, թե չէ:

Դավիթ Բանուչյան՝ Հիմա, հերթով գալիս եմ: Իմ կարծիքն եմ ասում. կարող եք համաձայն չլինել, բայց ասեմ: Կինոյի հիմնադրամի նկատմամբ կինոարտադրողների կողմից կա անվստահության մթնոլորտ, որտեղ, որը ըստ իս, գալիս է իներցիայով.

շատ վաղուցվանից է գալիս. Գնորգյանից է գալիս, թե հայֆիլմից է գալիս, չեմ ուզում կոնկրետացնեմ, բայց գալիս է դա իներցիայով: Բայց իհարկե, կինոյի հիմնադրամը էս պրոցեսով նաև մոտենում ա կինոարտադրողին և կինոարտադրողն էլ մոտենում ա հիմնադրամին, և պրոցեսը գնալու է նրան, որ Հայաստանում կինոարտադրության ոլորտը զարգանա: Սրան ենք միտված: Որևէ այլ բան չեմ կարող ասել:

Արմեն Խաչատրյան՝ Մի բան էլ ավելացնեմ. ժողովուրդ, աջակցության մասին որ խոսում եք, բոլորդ քննադատում եք օրինակ՝ վերջին կանոնակարգը, որը որ մենք ստիպված էինք էդ պրոցեսը անելու, որպեսզի մրցույթները իրականացվի: Եթե էդ աջակցության տրամաբանությունը չլիներ, էդ չէր արվի: Մենք կարող էինք ուղղակի ասել, որ գիտեք ինչ կա ժողովուրդ, դեռևս իրավական ակտերը ընդունված չեն, կամ կանոնակարգերը, ի վերջո դեռ մշակման փուլում են, եկեք սպասենք ևս 7-8 ամիս, որովհետև օրինակ քեշբեքի նախագիծը առնվազն մի տարի ֆոռաց: Սպասենք 7-8 ամիս, մինչև կընդունվի, նոր մրցույթ կանենք: Բայց դրա արդյունքում էսօր 52 հատ հայտ կա, որ անցել ա հաջորդ փուլ, էդքան մարդ կտուժեր: Ասեմ ավելին, եթե էդ աջակցության տրամաբանությունը չլիներ, էս կանոնակարգը, որը որ դուք նույնպես չեք հավանել, մի հատ դրույթ ունի սահմանած, որ մի շարք մարդկանց օգնել ա, բայց դրա մասին չեք խոսում: Էդ դրույթը էն ա, որ մենք հնարավորություն ենք տվել մարդկանց, որ եթե իրանց փաստաթղթերի մեջ կա թերություններ, որոշակի ժամկետ տրամադրենք իրանք գնան էդ թերությունները փոխեն, հետ բերեն:

Ռաֆֆի Մովսիսյան՝ Դա եղել ա մեր առաջարկների մեջ, այո:

Դավիթ Բանուչյան՝ Հա ու ընդունվել ա:

Արմեն Խաչատրյան՝ Իմ ասածը էն ա, որ եթե աջակցության տրամաբանություն չլիներ...

Զառա Զյան՝ Պետք ա երևա թղթի մեջ էդ աջակցությունը, որովհետև եվրոպացին էլ ա դա կարդում: Ինքը չի գալիս այստեղ, նստում սուրճ խմում ու ասում՝ մենք ուզում ենք քեզ աջակցենք: Ինքը թուղթն ա նայում:

Արմեն Խաչատրյան՝ Էդ տրամաբանությունը, էլի կանոնակարգի թղթի մեջ երևում ա, ու օրինակ՝ էդ բոլոր նախագծերը, որ էս տարի ներկայացվել են, երևի չի եղել տենց նախագիծ, որ չասենք, ժողովուրդ, այ էս բաները փոխեք, որ կարողանաք մրցույթին մասնակցել: Տրամաբանությունը և գլոբալ Ձեր գաղափարի պատասխանն եմ ասում.

Հիմնադրամը էն կառույցն ա, որը որ ամեն ինչով պատրաստ ա աջակցել ոլորտի զարգացմանը:

Արմինե Անդա՝ Դուք համաձայն ե՞ք, որ դուք չեք ունենալու որևէ գույքային իրավունք և արտադրող չեք լինելու: Համաձա՞յն եք, որ Հիմնադրամը լինելու է աջակցող, տրամադրելու է աջակցության փաստաթուղթ, և դուք արտադրող չեք լինելու: Այո, թե ոչ: Ո՞րն է ձեր դիրքորոշումը:

Արմեն Խաչատրյան՝ Մենք կարանք առաջարկենք երկու տարբերակ. եթե դուք չեք ուզում, մենք չենք էլ ակնկալում, որ դուք էդ, որ ասում եք իրավաբաններ վարձեք, ծախսատար ա, երկարաժամկետ ա և այլն, աշխատանքային խմբերի տրամաբանությունը հետևյալն ա, որ էն ինչը որ ես ի սկզբանե առաջարկում էի, որ հերթով անցնենք բոլոր դրույթների վրայով փոփոխության, որոնք որ կան և դուք հերթով ամեն դրույթի հետ կապված ասեք ձեր կարծիքը և տեղում մենք էդ կարծիքը արձանագրենք: Ամեն դրույթի մասին եմ խոսում, որը որ 7 էջ ա, 18 հոդված ա: Կարծում եմ՝ դա տևելու է մաքսիմում մի քանի ժամ: Կարանք կիսենք, ասենք առաջին 10 հոդվածը մի օր անենք, մյուսը՝ երկրորդ օրը անենք: Սա մի տարբերակն ա, որ աշխատանքային խումբը կարող է աշխատել, և դուք որևիցե բան չծախսեք, մենք ձեզ ասենք մեր որոշակի դիրքորոշումները ամեն դրույթի հետ կապված, հետո ընդհանուր ամփոփենք: Սա մի տարբերակն է, որը որ դուք իրավաբանի, այսպես ասած, փող չտաք:

Զառա Ջյան՝ Իսկ ի՞նչ ֆորմատով եք Դուք էդ համագործակցությունը տեսնում: Ես չեմ ասում՝ հա կամ չէ: Ես հարց եմ տալիս: Ի՞նչ ֆորմատով եք տեսնում:

Արմեն Խաչատրյան՝ Նստում ենք աշխատանքային խմբով, այս սեղանի շուրջ, հերթով կարդում ենք ամեն հոդվածը : Եթե դուք կարիք ունեք, որ ուրիշ մարդ էլ էստեղ ներկա լինի՝ իրավաբան, մասնագետ կամ ինչ-որ մեկը, իրեն էլ եք կանչում: Հերթով կարդում ենք հոդվածները, վարյով անցնում ենք: Դա իմ ունեցած պրակտիկայում ամենահեշտ և արդյունավետ ու ամենաճիշտ լուծումներից մեկն ա:

Զառա Ջյան՝ Ու դուք ընթացքում հասկանում ենք՝ ինչ եք պատրաստ կամ ինչը պատրաստ չեք:

Ռաֆֆի Մովսիսյան՝ Կոնցեպտուալ երկու շատ կարևոր դրույթ կա՝ ինչի շուրջ կարող ենք աշխատել:Մեկը՝ ինչքանո՞վ է ձեզ համար պրինցիպիալ, որ Հիմնադրամը ունենա արտադրելու իրավունք, մեկ, որ իրեն պետք է պատկանեն գույքային իրավունքները՝

երկու: Եվ որ պետք է, որ «Աջակցություն» բառը չլինի Օրենքի մեջ: Մեզ պետք ա հասկանալ՝ դա քննարկման տեղ ունի՞, թե չէ:

Արմեն Խաչատրյան՝ Որևիցէ բան որ գրած ա, մենք չենք ասում սենց ա մնալու, մեր համար սկզբունքային չի: Մեր խնդիրն է՝ վերցնել կարծիքներ, ֆիլմարտադրողների ոլորտի կարծիքները վերցնել, էս կարծիքներով սարքել ես, եթե էս նախագիծը փոփոխվում ա, որոշակի փոփոխություններ անել, և դրա հիման վրա գնալ գերատեսչություն՝ քննարկման:

Ռաֆֆի Մովսիսյան՝ Կարծիք կարող է ասել ցանկացած մեկը: Աշխատանքային խմբի իմաստը էն ա, որ մենք էստեղ նստած կարանք գանք էդ կետին: Հիմա մենք կարա՞նք աշխատանքային խմբով գանք էդ կետին, թե ձեզ ուղղակի կարծիք ա պետք:

Արմեն Խաչատրյան՝ Եթե դուք ուզում եք «Աջակցող» հասկացողություն լինի Օրենքի մեջ, մենք «Աջակցող» հասկացողությանը դեմ չենք, բայց եթե դուք ուզում եք, որ էս «Աջակցող» հասկացողությունը մնա՝ այն փոփոխությունների կարիք ունի, ըստ մեզ: Ըստ ինձ՝ «աջակցող» հասկացողության իմաստ, քանի որ էս գործառույթը այլ իրավական ակտերով կարգավորվում է՝ չկա: Եթե դուք գտնում եք, որպես ոլորտային մարդիկ, որ ուզում եք Օրենքի մեջ էդ բառը տենաք, էդ բառի հասկացողությունն էլ տենաք, նենց, ոնց որ գրած ա էռ աջակցող հասկացողության մեջ, դուք ասում եք՝ իրավունք չունի գործընթացին միջամտելու: Ես ձեզ ասում եմ, որ էդ իրավունքը էս պահին մենք պայմանագրով ունենք: Եկեք հստակեցնենք՝ ինչ ի նկատի ունեք միջամտել ասելը:

Արմինե Անդա՝ Միջամտելը և ֆինանսական վերահսկողությունը՝ տարբեր բաներ են:

Արմեն Խաչատրյան՝ Եկեք գրենք, որ աջակցող ա ու եթե իրա տրամադրված գումարին կարա ֆինանսական վերահսկողություն անի, հանենք, որ ինքը կարա, որովհետև օրենքի մեջ էդ մասը պահպանված ա, որ մենք գրաքննություն չենք կարա անենք, ոչ մի բան չենք կարա անենք, արձանագրենք, որ միջամտելը ինչն ա, ինչին չի կարա միջամտի: Արձանագրենք, որ գույքային իրավունքների մասով, ի վերջո, իմ դիրքորոշումը էն ա, բայց սա իմ սուբյեկտիվ դիրքորոշումն ա էս պահին, որովհետև լրացուցիչ ձեր կարծիքները վերցնելով, ի վերջո, պետք ա գերատեսչության հետ նորից քննարկվի էդ գույքայինի մասով, իմ դիրքորոշումը նա է, որ էն, ինչ-որ պետական ֆինանսավորմամբ ա տրվում էդ գումարները՝ էդտեղ մենք գույքային իրավունքները չունենք, այսինքն՝ էն գործընթացը, որը որ ի վերջո, եկել է, բայց, ի վերջո, հիմնադրամը պետք ա կարողան ա լիազորություն ունենա որոշակի պրոյեկտներում գույքային իրավունք ունենա: Մենք չպետք ա սահմանափակենք

Հիմնադրամին ընդհանրապես որևիցե պրոյեկտի նկատմամբ ինչ-որ գույքային իրավունք ունենալու: Հասկանու՞մ եք: Մենք չպետք է դա սահմանափակենք:

Արմինե Անդա՝ Միայն ժառանգություն: Ժառանգությունից դուրս՝ դա կոնկուրենցիա է արտադրողների հետ: Կինոարտադրողները չեն համաձայնելու ունենալ գույքային իրավունք որևէ ֆիլմի նկատմամբ, և լինի արտադրող: Դրա միջով մենք անցել ենք 15 տարի, մի՛ մոռացեք:

<u>ԸՆԴՄԻՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ</u>

Ռաֆֆի Մովսիսյան՝ Չնայած որ մեր հիմնական պահանջը էն էր, որ մենք գանք և խնդրենք, չգիտեմ, որ ձևակերպենք, որ նախագիծը ետ կանչենք, բայց քանի դեռ կա էս առաջարկը և համագործակցությունը մեր ամենաառաջին նպատակն է ու քանի որ ես բարի համբավ ունեմ, այսպես ասած, սպիտակ աղավնու, որ մեկ-մեկ կասկածի տակ են տալիս, բայց, հիմա եկանք մի վերջնակետի, որ գնանք այդ համագործակցության ճանապարհով, այսինքն՝ աշխատելու կետերի վրա: Մենք մեր կարծիքը և հիմնավորումները և ձևակերպումները տալիս ենք գրավոր՝ իրավաբանի հետ աշխատելով, դնում եք ի դրաֆթում:

Երկրորդ՝ էս օրվա մեր հանդիպման մասին արձանագրությունը, որ եկել ենք էս տեսակ որոշման, դրվի կայքում, որովհետև մենք էլ ունենք գործընկերներ, որոնց հետ հաշվետու ենք:

Երրորդ՝ որ արած փոփոխությունների նոր տարբերակը դրվի e-draft:

Արմեն Խաչատրյան՝ Էդ վերջին կետի մասով, չեմ կարա խոստանամ, որ կդնենք ի դրաֆթ, բայց կարամ խոստանամ, որ կուղարկվի բոլորին և մեր կայքում կդրվի: Ինչի e-draft չեմ կարա խոստանամ, որովհետև զուտ էդ նախարարության որոշումն ա՝ ինչն ա կախում ի դրաֆթ, ինչը չի կախում: Մենք կառաջարկենք, որպեսզի փոփոխված տարբերակը նորից դրվի e-draft: Բայց մեր կայքում հաստատ կդնենք փոփոխված տարբերակը:

Տիգրան Առաքելյան՝ Կարևոր մասը ասեմ ինչումն ա էն ա՝ եթե մենք ինչ- որ թղթի վրա ենք աշխատելու, մենք ստորագրելու ենք էդ թղթի տակ, որ մենք համաձայն ենք էս ամեն ինչի հետ, ու որպեսզի համայնքն էլ վստահ լինի, որ մենք չենք եկել ձեզ հետ ուրիշ բան ենք պայմանավորվել կամ խոսացել, նույնիսկ մենք ինքներս վստահ լինենք, որ էս խոսակցությունը դրա համար է գնում, որ եկեք աշխատենք, բոլորս տակը ստորագրենք: Պարոն Խաչատրյան, անցած անգամ Դուք չէիք եկել, ես էդ

միտքը պարոն Բանուչյանին ու Դանիելյանին էլի ասում, որ եթե գնալու ա ուրիշ գերատեսչություններ, ձեզ համար միանշանակ, ավելի հեշտ ա լինելու, երբ որ ամբողջ համայնքը ձեր մեջքի հետևն ա կանգնած, քան թե ձեզ դեմ ա: Եվ դրա համար, եթե էդ փաստաթղթի տակ ստորագրած լինենք մենք բոլորս, երբ ասում ենք մենք՝ այսքանս չենք՝ բոլորը, ասոցիացիաներից, ֆեդերացիաներից, գիլդիաներից մարդիկ են, որոնց ետևում կան ևս 100, 120 , 150 մարդ: Այսինքն՝ մեր ստորագրությունը ենթադրելու է բոլորին, բայց մենք պետք է իմանանք՝ ինչի տակ ենք ստորագրում:

Զառա Ջյան՝ Հավելեմ այս ասածները մի հատ պրակտիկ բանով, իմ անհանգստությունը դրսի մեր պարտնյորներն են, էդ շուխուռներն ա, մի հատ էլ Ձեզ առաջարկ, պարո՛ն Բանուչյան, կարծում եմ ֆոնդին էլ լավ կլինի, կանչենք պրեսս կոնֆերենցիա, համայնքի, էս աշխատանքային խմբի, պարոն Խաչատրյանիհետ միասին և էս համաձայնությունը, եթե հիմա գանք ընդհանուր հայտարարի՝ պրեսսային էլ ասենք և էդ լինքերը գոնե ուղարկենք դուրս, իրանք էլ տեսնեն, որ սկսվել ա համագործակցություն և որ էդ borderline-ը չկա:

Արմեն Խաչատրյան՝ Էդ պրեսսի մասը PR-ի բաժնի հետ կքննարկեք, բայց իմ մասով, Ձեր ասածի տրամաբանությամբ, կարա ի վերջո, աշխատանքային խումբը վերջնական առաջարկները ձևավորելուց հետո տեղադրվի մեր կայքում, որ էս էն փաստաթուղթն ա, որը որ աշխատանքային խումբը հաստատել է, որը որ տրամադրվելու է գերատեսչությանը, որ շրջանառվի:

Արմինե Անդա՝ Համայնքն էլ ա ուզենալու արձագանքի: Ես ունեմ ուրիշ առաջարկ. եկեք պայմանավորվենք, որ նախարարությանը առաջարկվելու է նորից դնել ի դրաֆթում, որպեսզի համայնքը արձագանքի:

Դավիթ Բանուչյան՝ Եկեք սկզբից: Միասին աշխատում ենք: Տարբերակ ենք ստեղծում միասին: Տարբերակը տալիս ենք ԿԳՄՍ նախարարություն ասելով, որ նորից շրջանառեն, բայց ամենակարճ ժամանակահատվածում՝ 15 օրով: Ժամկետների մեջ պետք է տեղավորվենք: Մենք ասելու ենք, որ ուզելու ենք, որ շրջանառվի երկրորդ անգամ: Կանեն, թե չէ՝ ես չեմ երաշխավորում: Բայց պարոն Խաչատրյանը մի հատ շատ լավ բան ասեց. անկախ ամեն ինչից՝ կշրջանառեն, թե չեն շրջանառի, Հայաստանի կինոյի հիմնադրամը իր կայքում կդնի համայնքի հետ, այս փաստաթուղթը վերջնական՝ որպես միասնական տարբերակ:

Արմեն Խաչատրյան՝ Եթե կլինեն որոշակի դրույթներ կամ որոշակի արտահայտություններ, որտեղ, որ համաձայնության չենք գա, որովհետև

աշխատանքային խմբի հետ կարանք և համաձայնության չգանք, եկեք այդ փաստն էլ արձանագրենք: Մենք այդ փաստաթղթի մեջ կարձանագրենք, որ էս-էս մարդիկ առաջարկեցին, որ մի կողմը առաջարկեց էս տարբերակը, մյուս կողմը առաջարկեց էս դրույթի մյուս տարբերակը: Ու արդեն իսկ գերատեսչություն ուղարկելուց կուղարկենք նաև այդ ձևով: Որ գիտեք ինչ կա, էս դրույթի հետ կապված այ սենց հակադիր կարծիքներ կան: Արդեն քաղաքականություն մշակող մարմինը կառաջնորդվի մեր կարծիքներով, թե ի վերջո, ինքը կունենա իր երրորդ կարծիքը, և այդ դրույթները, կամ ինչ-որ բան կհրապարակի իր մասով, դա իրենց լիազորությունների մեջ չենք կարող մտնենք: Մեզանից հասնում է աշխատանքային խմբով սարքել ինչ-որ փաստաթուղթ, որը որ եթե տարբեր կարծիքներ կլինի, այդ տարբեր կարծիքներն էլ մեջը արձանագրեն հստակ, որ համայնքը, օրինակ՝ սա է ուզում, մենք գտնում ենք սենց ինչ-որ մի բան, որը որ կներկայացնենք գերատեսչությանը, խնդրենք, որ էս փաստաթղթերը հրապարակեն կամ չհրապարակեն:

Արմինե Անդա՝ Եթե մենք ասում ենք, սա ազգային մարմին ա, մեծ կոնկուրենտ ա մեզ համար, հետ գալով գլոբալ կոնցեպտին, ինքը չպիտի լինի մենաշնորհային արտադրող: Դուք էլ մեկ ա գրում էք, որ պիտի լինի մենաշնորհային արտադրող: Գերատեսչությունն էլ, ո՛չ մասնագետ ա, ո՛չ գիտի, ոնց ենք մենք կինո անում: Իրենք վերցնում են, ասում են՝ շատ լավ ա, վերցնում-ու տալիս են ձերը:

Դավիթ Բանուչյան՝ Ես իրավունք ունե՞մ կարծիք ունենալու:

Արմինե Անդա՝ Եթե Դուք իրավունք ունեք, որպես անձ՝այո, բայց որպես Հիմնադրամի ղեկավար՝ Դուք ծառայում եք մեր շահերին: Դուք հանրային ծառայող եք:

Դավիթ Բանուչյան՝ Այո ծառայող եմ: Որպես ձեզ համար ծառայող մարդ՝ կարա՞մ ունենամ այլ կարծիք, ձեզ համար:

Արմինե Անդա՝ Մենաշնորհի՝ ոչ:

Արմեն Խաչատրյան՝ Եկեք մի բան արձանագրենք ու գնանք առաջ: Քաղաքականություն մշակողը նախարարությունն ա, մենք բոլորս կարծիք և առաջարկ ներկայացնող ենք: Երբ որ մենք կներկայացնենք մեր կարծիքը՝ մենք ոչ մեկին չենք կարող սահմանափակել ուրիշ մեկին հանդիպելու, մենք նման իրավունք չունենք: Եկեք էդ կարծիքը ձևավորենք, ներկայացնենք գերատեսչությանը, որ էդ մարդիկ էլ իմանան, որ ինչի շուրջ են ձեզ հետ հանդիպելու: Հետո ուզում եք հանդիպեք՝ հանդիպեք, ոչ մի սահմանափակում չկա:

Տիգրան Առաքելյան՝ Մի բան ասեմ. էս փաստաթուղթը, որ դուք դրել եք՝ դա արդեն իսկ ձեր կարծիքն ա, որի հետ մենք ունենք անհամաձայնություն:

Արմեն Խաչատրյան՝ Այո մեր կարծիքն ա որոշ առումով և դա կարա փոխվի:

Տիգրան Առաքելյան՝ Իհարկե, կարա փոխվի: Ամեն ինչ էլ կարա փոխվի: Դրան էլ մենք ուզում ենք գանք: Բայց կարանք չէ՞, սրա հետ կապված մեր կարծիքը ամեն տեղ էլ ասենք, ասենք՝ նախարարությունում:

Արմեն Խաչատրյան՝ Ասել եք էլի, ու e-draft կախելը հենց դրա համար ա, որ ձեր կարծիքները գրեք:

Տիգրան Առաքելյան՝ Երկրորդ բանը, որ պետք է խնդրեմ, եթե պատրաստվում ենք իրար հետ աշխատենք: Կա գործող օրենք, հաճախ նշում եք, որ այն ունի խնդիրներ սահմանադրության հետ, կոնվենցիայի հետ, խնդիրներ ուրիշ հարցերի շուրջ, խնդրում ենք, հնարավորինս սեղմ, գրավոր դա մեզ տվեք, մենք չգանք ձեզ մի բան առաջարկենք, որը պարզվի՝ նորից դա սխալ ա լինելու:

Ռաֆֆի Մովսիսյան՝ Մենք նաև նամակով դա պաշտոնական ուղարկել ենք: Խնդրանք-դիմում ենք ուղարկել: Եվ, եթե հնարավոր է, որ այսօրվա մեր արձանագրությունը՝ այս տեսակի որոշման, ստորագրենք բոլորս տակը, որ սա է ճանապարհը մեր:

Արմեն Խաչատրյան՝ Այո, կկազմվի արձանագրություն, կուղարկվի բոլորին և կտեղադրվի կայքում: Շնորհակալություն:

Որոշվեց՝

«Կինեմատոգրաֆիայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու, ոլորտում իրավակարգավորումներ անելու և ընթացակարգային բարեփոխումներ կատարելու նպատակով կրկին կազմակերպել քննարկում: Աշխատանքային խմբի նիստերի արդյունքում կայացած որոշումները հրապարակել բոլորի կողմից ստորագրելուց հետո:

«Կինոգործիչների միության գիլդիաների ու ասոցիացիաների աշխատանքային խումբը» առաջարկել է դադարեցնել առաջարկված նախագծի շրջանառությունը: Եթե աշխատանքային խմբի քննարկումների արդյունքում կկազմվի բոլորի կողմից ստորագրված նոր փաստաթուղթ, ապա «Կինեմատոգրաֆիայի մասին» ՀՀ օրենքի փոփոխությունների և լրացումների նախագիծը կտեղադրվի Հայաստանի կինոյի

հիմնադրամի կայքում, կուղարկվի ԿԳՄՍ նախարարություն՝ որպես աշխատանքային խմբի առաջարկ: Կառաջարկվի ԿԳՄՍ նախարարությանը նորից տեղադրել այն e-draft-ում:

«Կինոգործիչների միության գիլդիաների ու ասոցիացիաների աշխատանքային խմբին» ուղարկել գործող օրենքի հնարավոր հակասությունների նկարագրությունը՝ Կինեմատոգրաֆիայի համատեղ արտադրության կոնվենցիայի կամ ՀՀ Սահմանադրության հետ, եթե այդպիսիք առկա են:
«Կինոգործիչների միության գիլդիաների ու ասոցիացիաների աշխատանքային խումբը» կուղարկի «Կինեմատոգրաֆիայի մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների նախագծի դրույթների վերաբերյալ իր կարծիքը ու մեկնաբանությունները, և կտեղադրի e-draft-ում հրապարակված նախագծին կից:

Դավիթ Բանուչյան

Արմեն Խաչատրյան

Դիոնիս Մարգարյան

Արտակ Ղողոսյան

Անի Սահակյան

Արտյոմ Բաղդասարյան

Արմինե Անդա

Տիգրան Առաքելյան

Ռաֆֆի Մովսիսյան

Զառա Ջյան

Կարինե Սիմոնյան

Հովհաննես Գալստյան

Թամարա Ստեփանյան

Նիստի քարտուղար՝ Բայադյան Մանե